

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

30.10.2013թ.
Նախագահ՝

Կ.Բ. Այվազյան

ք. Իջևան

Քարտուղար՝

Ա.Ս.Հակոբյան

Ներկա էին խորհուրդի նախագահ Կ.Բ. Այվազյանը (նիստի նախագահողը), խորհրդի քարտուղար Ա. Հակոբյանը, <<Գծանկար, գունանկար>> ամբիոնի վարիչ Ա. Միրզոյանը, <<Դեկորատիվ – կիրառական արվեստի>> ամբիոնի վարիչ Ռ. Բուղդարյանը, ասիստենտներ Ս.Հովհաննիսյանը, Ա. Չիբուխյանը, Դ. Չիբուխյանը, Ռ. Պողոսյանը, դասախոսներ Դ. Պողոսյանը, Ա.Դիլբարյանը, Ա.Խաչատրյանը, Նիստին հրավիրված էր մասնաճյուղի Կրթության որակի ապահովման բաժնի մասնագետ, դասախոս, Վ. Աղաբաբյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2013-14 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքների ամփոփում:

/զեկ. Կ.Բ. Այվազյան/

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման վիճակի քննարկում համակարգչային նախագծման ոլորտներում:

/զեկ. Դ.Լ. Չիբուխյան/

ԼՍԵՅԻՆ – Ֆակուլտետի խորհրդի նախագահի զեկույցն օրակարգի առաջին հարցի վերաբերյալ: Նա ներկայացրեց առաջին ընթացիկ քննությունների ամփոփը՝ ըստ կուրսերի.

Թվերը ցույց են տալիս, որ ամենաշատ <<0>>-ներ և <<4>>-եր կան չորրորդ կուրսում՝ արվեստի պատմություն առարկաներից՝ XXդ.արտ. և հայ արվեստի պատմությունից: Նիստը նախագահողը մասնակիցներին հայտնեց, որ ֆակուլտետի ուսանողների առաջադիմությունն ըստ առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքների կազմում է 88.1%, որն ամենաբարձրն է մասնաճյուղի չորս ֆակուլտետների արդյունքների մեջ: Մնում է անհասկանալի, թե նման պարագաներում ինչու՞ ֆակուլտետում գերազանցիկներ չկան: Նույն հարցը հուզում է նաև մասնաճյուղի տնօրենին: Տնօրենի կողմից այդ հարցն ուղղվել է դեկանին՝ ինձ: Ես պատասխանեցի, որ մեր ֆակուլտետի ուսանողները << կաղում են>> արվեստի պատմության առարկաներից: Սակայն, ինչպես տեսնում եք, առաջին ընթացիկի ժամանակ առավելագույն <<4>> միավորներ կան հենց այդ առարկայից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ասիստենտ Ք.Մխիթարյանը նշեց, որ <<Գծանկարչություն>> և <<Գունանկարչություն>> առարկաներից ընթացիկ քննությունների արդյունքները հիմնականում արտացոլում են իրական պատկերը: Լինում են դեպքեր, երբ ուսանողներից խնդրատուներ են լինում՝ միավորը բարձրացնելու նպատակով: Սակայն ստացած միավորները չեն բարձրացվում: Նա ընդգծեց, որ ընթացիկին հաջողությամբ ներկայացան առաջին և երկրորդ կուրսերի ուսանողները, որը չորրորդ կուրսի մասին ասել չի կարելի:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հանձնարարել ամբիոնների վարիչներին և ԳԽ-ի նախագահ Լ.Ե.Լաչիկյանին, որ ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացին դարձնել պատշաճ ուշադրություն և հետևողական աշխատանքի արդյունքում հասնել նրան, որ ընթացիկ և եզրափակիչ քննությունների գնահատականները կամ համընկնեն, կամ իրար մոտ լինեն, օրինաչափ լինեն:

ԼՍԵՑԻՆ– Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ <<Կիրառական արվեստ>> մասնագիտության ուսումնական խորհրդատուի զեկույցը: Նա նշեց, որ համացանցը հնարավորություն է տալիս <<Կոմպոզիցիա>> և << Աշխատանք նյութի վրա>> առարկաների նախագծման, մոդելավորման և կոնստրուկտավորման աշխատանքներն իրականացնել համակարգիչների միջոցով: Ունենք և՛ համակարգիչ, և՛ դյուրակիր/նոթբուկ/ ունեցող ուսանողներ: Նրանք ունեն հնարավորություն տեղեկատվական տեխնոլոգիաներն արդյունավետ օգտագործելու և իրենց ուսուցման պրոցեսում ներդնելու համար: Սակայն այդպիսի ուսանողների մեծ մասը գերադասում է ոչ թե ստեղծագործել, այլ ինտերնետից <<քաշել>> որևէ չինական նկար և այդ պատրաստի նկարն օգտագործել: Շատ հաճախ այդ նկարները լինում են թեմային չհամապատասխանող, անճաշակ: Այդ նկարներից օգտվելու դեպքում ստացվում են մեր հայ իրականությանը չհամապատասխանող աշխատանքներ և ինչպես

մասնաճյուղի տնօրենն է հաճախ ակնարկում, մ եր ուսանողը նկարում է օվկիանոս կամ ջրվեժ: Նա նշեց, որ մեր ուսանողները խուսափում են ինքնուրույն, ստեղծագործական աշխատանքից, ուզում են դասախոսն իրենց համար նկարի կամ գործի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Դեկանը նշեց, որ երբ օգնում ենք ուսանողին, ոչ թե ուղղություն տալիս, նրան զրկում ենք մտածելու, արարելու, նորը ստեղծելու ստեղծագործական հաճույքից: Դասախոսները չպետք է տարվեն չափից ավելի օգնելու գայթակղությամբ: Հարկավոր է այնպես օգնել, որ այդ օգնությունը ուսանողին դրդի ինքնուրույն աշխատանքի: Դեկանը նշեց, որ ժամանակն է դասապրոցեսում ներառել նոթբուկ և պլանշետ: Նա ուրախությամբ հաստատեց, որ Ա.Հ.միբզոյանը դասի ժամանակ օգտագործում է պլանշետ և հույս հայտնեց, որ կլինեն նրան հետևողներ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հանձնարարել ֆակուլտետի այն դասախոսներին, որոնք ունեն նոթբուկ, իրենց նոթբուկները դասերի ժամանակ գործածեն: Դասապրոցեսում օգտագործեն պլանշետ / հնարավորության դեպքում/: Կամաց-կամաց տեղեկատվական տեխնոլոգիաներն արդյունավետ օգտագործել դասերի ժամանակ և նրանց դարձնել դասապրոցեսի բաղկացուցիչ մասը: